մով, որ գլխահարկը ստրկութեան կամ ճորտութեան նշան է, իսկ ապագայ Հայաստանի բնակիչները անգամ հպատակներ չեն, այլ ազատ քաղաքացիներ։

Այնուհետեւ գլխահարկի փոխարէն, որպէս պետութեան մշտական եկամտի աղբիւրներ, նա սահմանում է նոր հարկեր, աւելի ճիշդ՝ նոր տուրքեր — կերակրի եւ զգեստի տուրքեր։ Հայաստանի ամէն մի բնակիչը — այր թէ կին, ծեր թէ մանուկ, հարուստ թէ աղքատ — վճարում է պետութեան, իր տպառած բոլոր կարգի ուտելիքների համար, որ նա հաշուում է միջին թուով 40 դահեկան ամէն մի հոգուն, տասանորդ, այն է՝ 4 դահեկան տարեկան, իսկ իր հագած զգեստի համար — միջին հաշուով իւրաքանչիւրին 10 դահեկան տարեկան — 5%-ը։

Կայ պետական եկամտի մի այլ մնայուն աղբիւր եւս. դա աղն է։ Շահամիրեանը աղը համարում է պետութեան սեպհականութիւն, որի վաճառման մենաշնորհը պատկանում է միմիայն պետութեան։ Իւրաքանչիւր բնակիչ իր գործածելի աղը գնում է պետութիւնից, վճարելով դանձարանին, միջին հաշուով, մէկ դահեկան տարեկան։

Եւ Հայաստանի բովանդակ աղդաբնակութիւնը 24 միլիոն չունչ հաշուելով, ըստ այդմ նա ներկայացնում է տարեկան մուտքերի հետեւեալ տախտակը.—

	Դահեկան
1. Կերակրի տուրք	96,000,000
2. Զգեստի տուրք	12,000,000
3. Աղից ստացուած	24,000,000
Գումար	132,000,000

Գալով պետութեան ելքին, նա սահմանում է հետեւեալ մնայուն ծախսերը ամիս առ ամիս.—

	Դահեկան
1. Հանր. նախագահին ռոճիկ	6,000
2. 9 սպարապետներին a 1,000 դահ.	9,000
3. 9 սպասներին a 500 դահ.	4,500
4. 9 թնդանօթաձիգ պետերին a 250 դ.	2,250
5. 3 լրտեսապետներին a 200 դ.	600
6. 3 զինապետներին a 200 դ.	600
7. 3 վառօդապետներին a 200 դ.	600
8. 3 կառապետներին a 200 դ.	600
9. 3 վրանապետներին a 200 դ.	600
10. 3 կերակրապետներին a 200 դ.	600
11. 3 դանձապետներին a 200 դ.	600
12. 3 երկրաչափապետներին a 200 դ.	600
13. 3 տկարաց եւ աղք. պետերին a 200 դ.	600
14. 90 հազարապետներին a 200 դ.	18,000
15. 900 հարիւրապետներին a 100 դ.	90,000
16. 9,000 տասնապետներին a 15 դ.	135,000
17. 27,000 հեծեալ զին. a 10 դ.	270,000
18. 52,955 հետեւակ զին. a 7 դ.	370,685
Ամսական գում.	910, 835
Տարեկան գում.	10,930,020

Բացի վերոյիշեալից՝ իւրաքանչիւր տարուան պետական բիւդջէի մէջ մտնում են նաեւ հետեւեալ մնայուն ծախսերը.—

	Դահեկան
1. Ամրութիւնների, բերդերի շին.	200,000
2. Վրանների համար	100,000
3. Զէնքի ու ռազմամթերքի	200,000
4. «Ցաւերորդ կերակրոց»(?)	300,000
5. 24 կշիռ աղը հանելու ծախս	240,000
6. Տկարաց տան	100,000
7. Դեղերի եւ վարձատ. բժշ.	100,000
8. Աղքատաց եւ տնանկաց տան	100,000
9. Որբ երեխաների ուսման ծախս	100,000
Գումար	1,440,000

Բոլոր ծախսերը, նախորդի հետ միասին, 12,370,020 դահեկան։ Այսպիսով ամբողջ նախահաշիւը ներկայացնում է (հետեւեալ պատկերը.—

	Դահեկան
1. Ընդհանուր մուտքը	132,000,000
2. Ընդհանուր ելքը	12,370,020
3. Մնացորդ	119,629,980

Ինչպէս տեսնում էք, Շահամիրեանը չի տուել Հայկական պետութեան բոլոր եկամուտների եւ բոլոր ծախսերի լրիւ նախահաշիւը, այլ միմիայն հաստատուն, այսպէս ասած՝ ֆիկսէ եղած ելեւմուտքն է տուել։ Բայց ի հարկէ չէին կարող մէկ պետութեան ելքն ու մուտքը այդքան սահմանափակ լինել թէ՛ իրենց յօդուածներով և թէ՛ յատկացումներով, մանաւանդ մուտքերի բաժնում։ Ուստի հեղի-